**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

---

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Ք.Գյումրի** **« 09 » հունիս 2022թ.**

**Վարդանանց-1** **ժամը՝ 15:00**

Կայացավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում Գյումրի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի ընտրության մրցույթի կազմակերպման և անցկացման ժամանակավոր հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամներ՝ Դ.Առուշանյանը, Լ.Թովմասյանը, Ս.Խուբեսարյանը, Ս.Հովհաննիսյանը, Հ.Մարգարյանը, Լ.Մուրադյանը, Ջ.Միքայելյանը : Նիստը վարում է հանձնաժողովի նախագահ Դ.Առուշանյանը , արձանագրում է Ն.Հարությունյանը:

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում Գյումրի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի ընտրության մրցույթի արդյունքների ամփոփում»**

Հանձնաժողովը **Կողմ** << 7 >>, **Դեմ**<< 0 >>, **Ձեռնպահ**<<0>>

քվեարկությամբ հաստատեց նիստի օրակարգը:

Լսեցին.- «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում Գյումրի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի ընտրության մրցույթի արդյունքների ամփոփման մասին» հարցը **(Զեկուցող՝ Դ.Առուշանյան):**

Արտահայտվեցին.

1. Լ.Թովմասյան - «Բոլոր հավակնորդներն էլ պատրաստված էին, և հանձնաժողովի մոտ, իմ կարծիքով, թողեցին լավ տպավորություն»,
2. Լ.Մուրադյան.- «Հավակնորդների փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք ամբողջական են և համապատասխանում են սահմանված պահանջներին»:

Հանձնաժողովը արձանագրում է քվեարկության հետևյալ արդյունքները՝

հանձնաժողովի յոթ անդամներից կողմ են քվեարկել.

Մարիամ Ադամյանի օգտին՝ 0

Մարգարիտ Խոջոյանի օգտին՝ 0

Գևորգ Ղուկասյանի օգտին՝ 7

Հիմք ընդունելով բաց քվեարկության արդյունքները՝

**հանձնաժողովը որոշում է.**

1. Համարել կայացած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում Գյումրի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի ընտրության մրցույթը:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում Գյումրի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի ընտրության մրցույթին հաղթող ճանաչել Գևորգ Հակոբի Ղուկասյանին (ծնված՝ 23.08.1996 թ., անձնագիր 011163615, տրված՝ 09.10.2019թ., ոստիկանության 064-ի կողմից):
3. Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացնել առաջարկություն՝ Գևորգ Հակոբի Ղուկասյանի թեկնածությունը քննարկելու և հաստատելու մասին որոշման նախագիծը Գյումրի համայնքի ավագանու առաջիկա նիստի օրակարգ ընդգրկելու վերաբերյալ: